«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայաստանի Եվրոպական Համալսարանի
ռեկտոր Հ. Բիշարյան
«17» մարտի 2026թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Մխիթար Ժորայի Գասպարյանի «ՀՀ հանրակրթության ոլորտի կառավարման հիմնախնդիրները և բարելավման ուղիները» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի Եվրոպական համալսարանի Կառավարման ֆակուլտետի «Կառավարման» և «Գործարար վարչարարության» ամբիոնների 09.03. 2026թ. համատեղ կայացած նիստում (արձանագրություն թիվ 10)

Քննարկմանը մասնակցում էին ՀԵՀ կառավարման, Գործարար վարչարարության ամբիոնների դասախոսները՝ տնտ.թ., դոցենտ Ն. Կիրակոսյանը, տնտ.թ., Հ. Հովսեփյանը, տնտ.դ., պրոֆեսոր Գ Վահանյանը, տնտ.դ., պրոֆեսոր Տ. Մարտիրոսյանը, տնտ.թ., դոցենտ Ա. Մխիթարյանը, տնտ.թ., դոցենտ Մ. Ավագյանը, տնտ.թ., դոցենտ Կ.Սարգսյանը, տնտ.թ., դոցենտ Ա.Հանիսյանը, տնտ.թ., դոցենտ Ա. Ջանջոյանը, տնտ.թ., դոցենտ Հ. Հակոբյանը, տնտ.թ. Մ. Ֆրանգուլյանը, տնտ.թ. Ն. Այվազյանը, տնտ.թ. Տ. Մկրտչյանը, տնտ.թ. Ա. Կատինյանը, տնտ.թ. Գ. Գաբրիելյանը, Գ. Ավետիսյանը, Հ. Սամվելյանը, Ա. Այվազյանը, Է. Բաղդասարյանը, Ա. Հովհաննիսյանը, Լ. Կոստանյանը, Լ. Պետրոսյանը, հայցորդներ և ասպիրանտներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկային կապիտալի նկատմամբ աճող միջազգային պահանջները, հանրային ծառայությունների նկատմամբ սպասելիքների մեծացումը բերում են կրթության կարևոր մաս կազմող հանրակրթության նկատմամբ կառավարման արմատական վերահիմաստավորման անհրաժեշտության: Հանրակրթության համակարգը հանդիսանում է պետության սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն հիմքերից մեկը և մարդկային կապիտալի ձևավորման առանցքային գործոն: Կրթության արդյունավետ կառավարման ապահովումը հանդիսանում է ժամանակակից պետական կառավարման առաջնահերթ խնդիրներից, քանի որ հանրակրթության համակարգի արդյունավետությունն անմիջական ազդեցություն ունի հասարակության կրթական, սոցիալական և տնտեսական զարգացման վրա: Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին իրականացվող կրթական բարեփոխումները, հանրակրթության համակարգի արդիականացման գործընթացները, ինչպես նաև կառավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը պահանջում են ոլորտի խորքային գիտական ուսումնասիրություն և հիմնավորված առաջարկությունների մշակում: Այս առումով ներկայացված ատենախոսությունը կարևոր ներդրում է հանրակրթության կառավարման հիմնախնդիրների բացահայտման և դրանց լուծման արդյունավետ ուղիների մշակման գործում:

Մխիթար Գասպարյանի ատենախոսությունը նվիրված է այս հարցերի ուսումնասիրմանը և առկա հիմնախնդիրների վերհանմանը, ուստի ատենախոսության թեման արդիական և հրատապ է ինչպես տեսական, այնպես էլ կիրառական առումներով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է համակողմանիորեն ուսումնասիրել և վերլուծել Հայաստանի Հանրապետության հանրակրթության ոլորտում կառավարման արդի հիմնախնդիրները: Նպատակին համապատասխան աշխատանքում դրվել և վերլուծվել են հետևյալ խնդիրները՝

1. վերլուծել հանրակրթության դերը հանրային կառավարման համակարգում,
2. ուսումնասիրել հանրակրթության կառավարման տեսական հիմքերը,
3. կատարել հանրակրթության կառավարման միջազգային փորձի համեմատական վերլուծություն,
4. բացահայտել ՀՀ հանրակրթության համակարգի զարգացման առանձնահատկությունները,
5. բացահայտել ՀՀ հանրակրթության ոլորտի կառավարման հիմնական հիմնախնդիրները և դրանց պատճառահետևանքային շղթան,
6. վերլուծել կրթական բարեփոխումների ընթացքն ու դրանց գործնական արդյունքները,
7. մշակել հանրակրթության կառավարման կատարելագործման և բարեփոխումների հիմնավորված ուղիներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է հանրակրթության կառավարման համակարգի համակողմանի ուսումնասիրությամբ և նոր գիտական մոտեցումների կիրառմամբ: Աշխատանքում ստացված հիմնական գիտական արդյունքներն ու նորույթները ներկայացվում են հետևյալ կերպ.

1) մշակվել է ՀՀ հանրակրթության կառավարման նոր հայեցակարգային մոդել, որը միավորում է պետական կառավարման ուղղահայաց համակարգը,

դպրոցների ինստիտուցիոնալ ինքնավարությունը, համայնքային մասնակցային կառավարման բաղադրիչները և հանրային հաշվետվողականության գործիքները:

2) բացահայտվել են հանրակրթության կառավարման կառուցակարգերի և օրենսդրական դաշտի միջև առկա կառուցվածքային անհամապատասխանությունները և արդյունքում պարզվել են այն համակարգային խզումները, որոնք արգելակում են դպրոցների ինքնավարությունը և նվազեցնում կառավարման արդյունավետությունը,

3) մշակվել է հանրակրթության կառավարման արդյունավետության նոր ցուցիչային շրջանակ՝ կառավարման արդյունավետության 5 չափելի խմբեր՝ ինստիտուցիոնալ կայունություն, մասնակցային կառավարման աստիճան, ֆինանսական արդյունավետություն և ռացիոնալ բաշխում, ինքնավարություն-հաշվետվողականություն և հավասարակշրություն, կրթության որակի ու արդյունքների փոխկապակցում,

4) իրականացվել է 2008-2024թթ. հանրակրթության կառավարման տվյալների համակողմանի վիճակագրական վերլուծություն՝ նոր միտումների բացահայտմամբ, ընդ որում՝ վերլուծությունը հիմնված է ոչ միայն ընդհանուր ցուցանիշների, այլև շարժընթացների փոխկապակցությունների և ինստիտուցիոնալ պատճառահետևանքային շղթաների վրա:

5) ներկայացվել և հիմնավորվել են ՀՀ հանրակրթության կառավարման բարեփոխումների նոր, համակարգային և տվյալահեն ուղղությունները՝ ռազմավարական բարեփոխումների ամբողջական փաթեթը, որը հիմնված է միջազգային համեմատական փորձի, ինստիտուցիոնալ վերլուծության, վիճակագրական տվյալների և կառավարման նորացված մոդելի վրա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է գիտական հետազոտության նպատակով, խնդիրներով և տրամաբանությամբ:

Ատենախոսությունը շարադրված է 150 էջի վրա և բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություն բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության **ներածությունում** հեղինակը հիմնավորել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը, խնդիրները, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գործնական նշանակությունը, ստացված հիմնական արդյունքներն ու գիտական նորույթները, աշխատանքի ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Հանրակրթության ոլորտի կառավարման տեսամեթոդական հիմքերը»** գլխում ներկայացվել են հանրակրթության դերն ու նշանակությունը հանրային կառավարման համակարգում, իրականացվել է հանրակրթության կառավարման միջազգային փորձի համեմատական վերլուծություն:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ հանրակրթության ոլորտի զարգացման արդի միտումները»** գլխում վերլուծության են ենթարկվել ՀՀ հանրակրթության ոլորտի զարգացման առանձնահատկությունները, ինչպես նաև ՀՀ հանրակրթության ոլորտի կառավարման արդի հիմնախնդիրները: Հետազոտվել են ՀՀ հանրակրթության ոլորտի զարգացման առանձնահտկությունները, հանրակրթոյթնա կառավարման կառուցակարգերի և օրենսդրական դաշտի միջև առկա կառուցվածքային անհամապատասխանությունները, բացահայտվել են հանրակրթական հաստատության կառավարման ոլորտի զարգացման միտումները:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ հանրակրթության ոլորտի կառավարման բարեփոխումների հնարավոր ուղիները»** գլխում հեղինակի կողմից ներկայացվել են ՀՀ հանրակրթյան ոլորտի կառավարման բարեփոխումների ուղիները: Հետազոտության շրջանակներում առաջարկվել են հանրակրթության կառավարման արդյունավետության նոր ցուցչային շրջանակ, մշակվել են կառավարման արդյունավետության 5 չափելի խմբեր, այդ թվում ինստիտուցիոնալ կայունության, մասնակցային կառավարման աստիճանի, ֆինանասկաան

արդյունավետության և ռացիոն բաշխման, կրթության որակի և արդյունքների փոխկապակցման:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ներկայացված են հիմնական եզրակացությունները և բարձրացված հիմնախնդիրների լուծման մոտեցումները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Չնայած՝ ատենախոսությունն, ընդհանուր առմամբ, ունի գիտական և գործնական նշանակություն, այնուամենայնիվ, աշխատանքում կարելի է նշել նաև որոշ դիտողություններ և առաջարկություններ, որոնք կարող են հաշվի առնվել հետագա հետազոտությունների ընթացքում.

1. Ատենախոսության տեսական հատվածում նպատակահարմար կլիներ առավել ընդգրկուն ներկայացնել ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ ժամանակակից գիտական մոտեցումները և միջազգային փորձը, ինչը թույլ կտար ավելի ամբողջական բացահայտել թեմայի տեսական հիմքերը:

2. Աշխատանքի վերլուծական մասերում որոշ ցուցանիշների ուսումնասիրությունը ներկայացված է համեմատաբար համառոտ, սակայն նպատակահարմար կլիներ կիրառել լրացուցիչ վերլուծական գործիքներ և ցուցանիշներ՝ ապահովելով իրականացված հետազոտության առավել խորացված բնույթը:

3. Ատենախոսության գործնական առաջարկությունները հիմնականում հիմնավորված են, սակայն դրանց կիրառման արդյունավետությունը կարելի էր առավել ընդգծել՝ ներկայացնելով առաջարկությունների իրականացման հնարավոր մեխանիզմներ կամ ակնկալվող տնտեսական արդյունքների գնահատում:

4. Առկա են նյութի ներկայացման կառուցվածքային կամ խմբագրական բնույթի որոշ թերություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության վերաբերյալ արված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը և ստացված արդյունքների կարևորությունը:

Ատենախոսությունը հանդիսանում է ավարտուն գիտական հետազոտություն, որն ունի տեսական և գործնական նշանակություն: Աշխատանքում առաջադրված խնդիրները լուծված են գիտականորեն հիմնավորված ձևով, ներկայացված եզրակացություններն ու առաջարկությունները տրամաբանական են և կարող են օգտագործվել հանրակրթության կառավարման համակարգի կատարելագործման գործընթացում:

Կատարված հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են հեղինակի 8 գիտական հոդվածներում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը, արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Մխիթար Ժորայի Գասպարյանի «ՀՀ հանրակրթության ոլորտի կառավարման հիմնախնդիրները և բարելավման ուղիները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀԵՀ կառավարման ֆակուլտետի կառավարման ամբիոնի վարիչ,
տնտ.թ., դոցենտ՝ Ն. Կիրակոսյան

ՀԵՀ կառավարման ֆակուլտետի գործարար վարչարարության
ամբիոնի վարիչ, տնտ.թ., դոցենտ՝ Հ. Հովսեփյան

Գրախոսներ՝

ՀԵՀ կառավարման ֆակուլտետի կառավարման ամբիոնի դասախոս,

տնտ.թ., դոցենտ՝ Ա. Հանիսյան

ՀԵՀ կառավարման ֆակուլտետի կառավարման ամբիոնի
դասախոս, տնտ.թ., դոցենտ՝ Մ. Ֆրանգուլյան

Ստորագրությունները հաստատում եմ
ՀԵՀ գիտական քարտուղար՝
աշխ.գ.թ., դոցենտ Գ. Մանասյան

17 մարտի 2026թ.